ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2024 թվականի N 366 - Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետարանին՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 77 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով Երևանի քաղաքապետարանի և «ԱԳԱՐԱԿ» բաց բաժնետիրական ընկերության միջև 2022 թվականի հունիսի 24-ին կնքված կապալային աշխատանքների կատարման N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/74» ծածկագրով գնման պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր), չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ նախադասության և 4-րդ ենթակետի պահանջը, կատարել հետևյալ փոփոխությունները.

1) պայմանագրի N 1 հավելվածի «Ծավալաթերթ-նախահաշիվ» աղյուսակի «ընդամենը» սյունակում «336000,000» թվին ավելացնել «Լրացուցիչ աշխատանք-ներ» աղյուսակի «ընդամենը» սյունակի «23126,217» հազ. դրամ թիվը, որը կազմում է պայմանագրի գնի 6.88 տոկոսը.

2) պայմանագրով նախատեսված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 77 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի մայիսի 31-ը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ